«ՄԵՆՔ ՅԵՏ ԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵՆՔ ՄԵԶՆԻՑ ԽԼՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՀՈՂԵՐԸ»

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԸՆԿ. ՏԻԳՐԱՆ ԿԻՒՐԵՂԵԱՆԻ ՀԵՏ

«Ազատամարտ».- Ի՞նչ առաքելութեամբ էիք գնացել Շահումեան:

Տ. Կիւրեղեան.- Ես գնացել էի իմ նախաձեռնութեամբ, հանդիպումներ ունենալու, ծանօթանալու ժողովրդի տրամադրութիւններին, տեսնելու, թէ ինչո՞վ կարելի է օգնել: Տեսայ, հանդիպեցի, եղայ շրջանի բոլոր գիւղերում, բացի Էրքէջից, չնայած, որ այն ժամանակ Էրքէջն արդէն ազատագրուել էր: Տեսանք, թէ ադրբեջանցիների կողմից ինչեր էին արուել այդ գիւղերում, Բուզլուխում, Մանաշիդում եւ գուցէ նաեւ Էրքէջում: Հայերից խլած այդ գիւղերը բնակեցուել էին ադրբեջանցիներով, որոնց համար ստեղծուել էին բոլոր պայմանները. իւրաքանչիւր ընտանիքի տուել էին գունաւոր հեռուստացոյց, սառնարան, եւայլն. անձամբ եմ տեսել: Ի պատիւ երիտասարդներին, որոնք իրենց հողը կարողացան յետ վերադարձնել,- այս վերջին տարիների համար շատ հազուադէպ բան արեցին նրանք: Փառք ու պատիւ նրանց, յաւերժ յիշատակ զոհուածներին:

«Ա».- Ենթադրում եմ, որ տղաների վերջին սխրանքը իր ազդեցութիւնն է թողել ժողովրդի տրամադրութիւնների վրայ: Դուք ի՞նչ տեսաք որպէս արտայայտութիւն այդ տրամադրութիւնների:

Տ.Կ.- Ժողովրդի տրամադրութիւնը շատ բարձր է, որովհետեւ նա տեսաւ, որ ինքը իրօք կարող է իր հողը պաշտպանել: Եւ եթէ պետական մօտեցում ցոյց տրուի այդ հարցին, արդիւնքը երեւալու է անմիջապէս: Այսօր Հայ Բարիս գիւղում երիտասարդներ կան, որոնք ցանկութիւն են յայտնում տեղափոխուելու նոր ազատագրուած գիւղերը: Պատկերացրէք, որ Հայ Բարիսում կայ գերբնակուածութեան հարց, տների պակաս: Հայ Բարիսում, ինչպէս եւ այլուր, եղել էին յուսահատութեան պահեր, բայց հիմա դրութիւնը ամբողջովին շրջուած է:

Բոլոր այն քայլերը, որոնք կարող են կոտրել ժողովուրդի տրամադրութիւնները, դաւաճանական են: Ժողովուրդը գտնւում է հոգեկան վերելքի մէջ, եւ նա ոգեւորուած կարող է ուղղակի սքրանքներ գործել: Մենք չպէտք է ժողովրդի յոյսերը ի չիք դարձնենք: Այնպէս անենք, որ քաղաքականութիւնը յետ չընկնի կատարուած իրական գործերից: Հակառակ դէպքում, մենք կարող ենք յայտնուել այնպիսի դրութեան մէջ, որ փաստօրէն ռազմական բեմերում ունենալով յաղթանակներ, քաղաքական բեմերում այդ յաղթանակները կորցնենք: Այստեղ մեր կողմից պէտք է տարուի այնպիսի քաղաքականութիւն, որը ամրապնդի այդ իրական յաղթանակը:

Ես համոզուած եմ, որ Մարտունաշէնը եւ Գետաշէնը յետ կը վերադարձուեն նորից: Ես յոյս ունեմ նաեւ Ազատի եւ Կամոյի համար: Եթէ Հայաստանի պետութիւնը վարի յատուկ եւ կշռադատուած քաղաքականութիւն, մենք կարող ենք յետ վերադարձնել Ադրբեջանում բոլոր կորցրած հայկական հողերը: